ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2017 թվականի N 60-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՖՐԵԴ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Ալֆրեդ Պողոսյանի դիմումը ինքնակամ շինությունը օրինական ճանաչելու մասին՝ ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ալֆրեդ Գրիշի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ Ալափարս, Երջանկության փողոց, N 20-20/1 հասցեում գտնվող, 07-008-0057-0031 ծածկագրով հասարակական նշանակության հողամասի վրա 2010 թվականին ինքնակամ կառուցված 151,5 քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտը ճանաչել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացի Ալֆրեդ Պողոսյանին 151,5 քառակուսի մետր սպասարկման օբյեկտի օրինականացման համար Ալափարսի համայնքի բյուջե վճարել 636 300 դրամ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և չեղյալ կճանաչվի 60-օրյա ժամկետում գումարը չվճարվելու դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2017 թ. հոկտեմբերի 19
գ.Ալափարս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ալափարս համայնք, 19-րդ փող., թիվ 19,
հեռ.077.257533, էլ.փոստ alapars.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2017 թվականի N 61-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՎԱՀԵ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ, 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, հիմք ընդունելով Ալափարս գյուղի Վարդան Մամիկոնյան փողոց, տուն 46 հասցեի բնակիչ Սերիկ Պողոսյանի դիմումը, հաշվի առնելով անչափահաս Վահե Պողոսյանի առանց ծնողական խնամքի մնալու փաստը, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի N 4 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.Անչափահաս Վահե Սամվելի Պողոսյանի (ծնված՝ 29.12.2002թ.) նկատմամբ հոգաբարձու նշանակել Սերիկ Պարույրի Պողոսյանին (ծնված՝ 20.07.1956թ.):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 24
գ.Ալափարս